19 օգոստոսի 2026թ
Երևանի քաղաքապետ
Տիգրան Ավինյանին
HETQ.am-ի լրագրող

Անյա Սարկիսովայից

(Էլ-փոստ annya.sarkisova@gmail.com),

հեռ.`(098 010-421)

Հարգելի պարոն Ավինյան,

Հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալ հարցի վերաբերյալ։

«Հետքը» տեղեկություն է ստացել, որ օգոստոսի 13-ին Բուզանդ 1/3 հասցեում տեղի ունեցած հրդեհի ժամանակ այրվել է Երևանի քաղաքապետարանի արխիվը, որը պահվում էր նկուղում։ Խնդրում եմ հայտնել՝

1. Օգոստոսի 13-ին Բուզանդ 1/3 հասցեում տեղի ունեցած հրդեհի հետևանքով Երևանի քաղաքապետարանի արխիվային տարածքը վնասվե՞լ կամ այրվե՞լ է։ Արխիվի կոնկրետ ո՞ր հատվածն է վնասվել։
2. Ի՞նչ փաստաթղթեր, նյութեր կամ արխիվային ֆոնդեր են վնասվել կամ ոչնչացվել։
3. Արդյո՞ք վնասվել են քաղաքացիների դիմումները, սեփականության/հողօգտագործման, շինարարության, քաղաքաշինության, թույլտվությունների կամ այլ վարչական փաստաթղթեր։
4. Ո՞ր տարիների փաստաթղթերն են վնասվել։ Կա՞ն արդյոք հին/պատմական արխիվային նյութեր, որոնք վնասվել են։
7. Ինչո՞ւ էր Երևանի քաղաքապետարանի արխիվը պահվում Բուզանդ 1/3 հասցեում։
8. Ի՞նչ պայմաններում էին պահվում արխիվային փաստաթղթերը՝ պահպանության, հրդեհային անվտանգության և ջերմաստիճանային/խոնավության պահանջներին համապատասխանու՞մ են այմանները։
9. Արդյո՞ք տարածքն ունեցել է հրդեհի հայտնաբերման և հրդեհաշիջման համակարգեր։ Եթե այո՝ աշխատե՞լ են։
10. Ե՞րբ է վերջին անգամ ստուգվել այդ տարածքի հրդեհային անվտանգությունը և ո՞ր մարմինն է իրականացրել ստուգումը։
12. Ի՞նչն է եղել հրդեհի պատճառը։ Քաղաքապետարանը պաշտոնական տեղեկություն ունի՞։
13. Հրդեհի առիթով իրականացվո՞ւմ է քննություն կամ ուսումնասիրություն։ Ո՞ր մարմինն է այն իրականացնում։
14. Քաղաքապետարանի կողմից նշանակվե՞լ է ներքին ծառայողական ուսումնասիրություն՝ պարզելու համար, թե ինչ պայմաններում է հրդեհվել արխիվը։

15. Արդյո՞ք մինչ հրդեհը եղել են հրդեհային անվտանգության հետ կապված խնդիրների, անսարքությունների կամ նախազգուշացումների վերաբերյալ արձանագրություններ։
16. Քաղաքապետարանը ունե՞ր արդյոք այդ փաստաթղթերի թվայնացված կամ այլ պահուստային պատճեններ։
17. Եթե այո՝ որքանո՞վ է հնարավոր այրված/վնասված փաստաթղթերի վերականգնումը։
18. Եթե փաստաթղթերը չեն եղել թվայնացված, ինչպե՞ս է քաղաքապետարանը պատրաստվում վերականգնել քաղաքացիների համար անհրաժեշտ տեղեկությունները։
19. Արդյո՞ք հրդեհի հետևանքով քաղաքացիների կամ կազմակերպությունների գույքային, իրավական կամ վարչական իրավունքների վրա կարող են հետևանքներ առաջանալ։
20. Եթե որևէ փաստաթուղթ այլևս հնարավոր չէ տրամադրել, քաղաքապետարանը ի՞նչ այլընտրանքային մեխանիզմ է նախատեսում դրա բովանդակությունը հաստատելու համար։
21. Գույքագրվե՞լ է կրված վնասը։

Խնդրում եմ հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետում։

Հարգանքով՝ Անյա Սարկիսովա